

**VII. ՀՀ ԱՎԾ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԶԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ  
2012թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՁԱՆԱՌՈՒԹՅԱՆ ,  
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՐՑՎԱԾ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ  
ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներում 2012թ. ընթացքում փաստաթղթաշրջանառությունը հետևյալ թվային պատկերն է ներկայացնում.

**1. Մտից թղթակցություն՝**

ա/ ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումներ (70 միավոր),  
բ/ գրություններ նախարարություններից և այլ գերատեսչություններից (2 287 միավոր),  
գ/ ՀՀ ԱՎԾ առանձնացված ստորաբաժանումներից (1 047 միավոր),  
դ/ ՀՀ ԱՎԾ կառուցվածքային ստորաբաժանումներից (725 միավոր),  
ե/ արտասահմանյան երկրներից (815 միավոր), այդ թվում՝ ԱՊՀ երկրներից (71 միավոր):

**Ընդամենը՝ 4 944 միավոր (2011թ.-ի 4 737 միավորի դիմաց):**

**2. Ելից թղթակցություն՝**

ա/ ելից գրություններ (3 006 միավոր)  
բ/ հրապարակումներ (11 586 միավոր)

**Ընդամենը՝ 14592 միավոր (2011թ.-ի 13393 միավորի դիմաց):**

Ընդհանուր փաստաթղթաշրջանառությունը 2012թ. ընթացքում կազմել է 19 536 միավոր (2011թ.՝ 18 130 միավորի դիմաց):

Ստացված թղթակցությունը 2012թ.-ին 2011թ. համեմատությամբ ավելացել է 207 միավորով, իսկ ելից թղթակցությունը՝ 1 199 միավորով:

ՀՀ ԱՎԾ նախագահի կողմից 2012թ. ընթացքում վերահսկողություն է սահմանվել 150 (2011թ.՝ 172 միավոր) փաստաթղթի (օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված ժամկետ պարունակող փաստաթղթեր) և կատարումն ապահովելու համար, որոնք կատարվել են սահմանված ժամկետներում: